Հասցեատեր՝
Մարտունու մարզադպրոց
Էլեկտրոնային փոստի հասցե՝ martunu.marzadproc@mail.ru

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական և էթիկայի կոմիտեի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20.11.2025թ.

Նախագահ	Կարեն Հովհաննիսյան
Անդամներ	Արփի Լազարյան
	Հենրիկ Խաչատրյան
	Նարեկ Ադամյան
	Դավիթ Բակլաչյան

Վարույթ՝	14B-026
Խախտում՝	1. «Մարտունի-12» թիմի մեղքով խաղն անավարտ թողնելը (Հավելված 1 Ե, 20-րդ կետ) 2. Մարտունու մարզադպրոցի տնօրեն Սամվել Մոսեյանի կողմից ոչ սպորտային վարքագիծ դրսևորելը (Հավելված 1 Ե, 27-րդ կետ) 3. Դաշտի տեր թիմի երկրպագուների կողմից վիրավորական արտահայտություններ թույլ տալը, անհարգալից արարքներ իրականացնելը (Հավելված 1 Ե, 22-րդ կետ)
Առաջնություն՝	ՀՀ ֆուտբոլի 2025-2026թթ. մինչև 14տ. մանկապատանեկան առաջնություն
Խաղ՝	«Մարտունի-12» - «Արարատ-12», 06.11.2025թ.

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն որոշեց՝

1. «Մարտունի-12» թիմին գրանցել տեխնիկական պարտություն՝ 0:3 հաշվով: Մարտունու մարզադպրոցին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20,000 ՀՀ դրամի չափով:
2. Ղեկավարվելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2025թ. խմբագրություն) 4-րդ հոդվածի 1-ին կետի 1.8 ենթակետով՝ Մարտունու մարզադպրոցի տնօրեն Սամվել Մոսեյանի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել մարզադաշտ մուտք գործելու արգելք՝ 1 (մեկ) ամիս ժամկետով: Պատասխանատվության միջոցի կիրառումը տարածվում է 2025 թվականի նոյեմբերի 21-ից սկսած ՀՖՖ հովանու ներքո անցկացվող մանկապատանեկան առաջնությունների

բոլոր հանդիպումների վրա։ Մարտունու մարզադպրոցին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20,000 ՀՀ դրամի չափով։

3. Մարտունու մարզադպրոցին տուգանել նվազագույն աշխատավարձի երեսունապատիկի՝ 30,000 ՀՀ դրամի չափով։

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահ՝

Կարեն Հովհաննիսյան

Ծանուցում

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (disciplinary@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում։
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 50,000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց։ Նշված վճարը վերադարձման ենթակա չէ։
- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը։ Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության։
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից։